«Տաթև» դպրոց
ՀՀ, 0065, ք. Երևան,
Սեբաստիա 3/7, 2-4-րդ հարկեր:
Հեռ.՝ 74-80-30, 74-80-40:
Էլ փոստ՝ tatevschool@yahoo.com
Կայք՝ www.tatevschool.am

Школа “Татев”
РА, 0065, Ереван,
Севастия 3/7, 2-4 этажи.
Тел. 74-80-30, 74-80-40.
Эл. почта: tatevschool@yahoo.com
Сайт: www.tatevschool.am

“Tatev”
providing general education
Sebastia 3/7,2-4 floors,
0065,Yerevan, RA.
Tel. 74-80-30, 74-80-40.
E-mail: tatevschool@yahoo.com
Website: www.tatevschool.am

«Տաթև» դպրոց

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական պարտադիր կրթության իրականացում
2. Ներդպրոցական վերահսկողության համակարգը
3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը
4. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացումը
5. Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Տաթև» դպրոցը հանրակրթական հաստատություն է: Այն իր կազմում ունի տարրական և հիմնական դպրոց:

Դպրոցը գործում է իր Կանոնակարգի դրույթներով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ:

Դպրոցն ինքնուրույն է հանրակրթական գործընթացի կազմակերպման գործում, ունի իրավական և ֆինանսական ինքնուրույնություն: Այն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրության պահանջներով՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական պայմանները և ազգային ավանդները:

Կրթօջախն ապահովում է անհատի, հասարակության և պետության պահանջմունքների իրականացումն ընդհանուր կրթության գործում: Մեր կրթօջախը հասարակության և պետության առջև պատասխանատվություն է կրում սովորողի անձի կրթության իրավունքի իրականացման, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ձևերի ընտրության, կրթությանը ներկայացվող պարտադիր պահանջների լիարժեք յուրացման համար:

Մենք կրթությունը դիտարկում ենք որպես ազգային անվտանգության ապահովման, երկրի զարգացման ու հզորացման կարևոր գործոն և երաշխիք, իսկ գլխավոր նպատակը սովորողների մտավոր, ֆիզիկական, հոգևոր ու սոցիալական ունակությունների զարգացումն է և մտագործունեության տարբեր տեսակներին տիրապետող, ՀՀ քաղաքացու կատարելատիպին ձգտող շրջանավարտի ձևավորումը:

Կանոնակարգով սահմանված կրթանպատակները, բովանդակությունն ու չափորոշիչները պարտադիր են և միասնական «Տաթև» դպրոցի բոլոր սովորողների և աշխատակազմի համար:

1. Հիմնական պարտադիր կրթության իրականացում

2021-2022 ուստարվա խնդիրները

1. Սովորողների կյանքի ու առողջության պահպանում
2. Պետական ծրագրերի իրագործում, դասավանդման ձևերի ու մեթոդների կատարելագործում
3. Դպրոցի գործունեության կատարելագործում
4. Ուսուցման և դաստիարակության պրոբլեմների լուծում, զուգակցում և կիրարկում
5. Սովորողների անհատականության, մտավոր, բարոյական և հոգեբանական հատկանիշների բացահայտում, նրանց դրական հակումների և նախասիրությունների, ֆիզիկական և մտավոր կարողությունների զարգացում
6. Մայրենի լեզվի դրվածքի բարելավում
7. Երիտասարդ ուսուցիչների աշխատանքի բարելավում
8. Միջոցառումների օգնությամբ սովորողների հոգևոր և բարոյական նորմերի ձևավորում
9. Դասալսումների միջոցով ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածության կատարելագործում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ	ՆՇՈՒՄՆԵՐ
2021-2022 ուստարում կոմպլեկտավորել 27 դասարան՝ 356 սովորողով, այդ թվում՝ I դասարան – 5 հատ 75 սովորող II դասարան – 4 հատ 61 սովորող III դասարան – 4 հատ 60 սովորող IV դասարան – 3 հատ 41 սովորող V դասարան – 3 հատ 31 սովորող VI դասարան – 3 հատ 37 սովորող VII դասարան – 2 հատ 20 սովորող VIII դասարան – 2 հատ 22 սովորող IX դասարան – 1 հատ 9 սովորող Ընդհանուր՝ I-IV դասարան – 237 V- IX դասարան – 119	1.09.2021	Օ. Պետրոսյան	

2. Ներդպրոցական վերահսկողության համակարգը

Ներդպրոցական վերահսկողությունը համակարգում է դպրոցի տնօրենը, ում պաշտոնային պարտականությունները ներկայացվում են ստորև։

1. Իրականացնել դպրոցի ընթացիկ կառավարումը։
2. Ապահովել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը։
3. Մշակել և ներդնել ներքին կարգապահական կանոնները։
4. Ապահովել դպրոցի Կանոնակարգով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը։
5. Սահմանել աշխատողների աշխատանքային պարտականությունները։
6. Համակարգել և հսկել մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքը։
7. Ապահովել կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ։
8. Ապահովել սահմանված կարգով պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը։
9. Ղեկավարել ուսումնադաստիարակչական աշխատանքները։
10. Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների և մանկավարժների հաշվետվությունները։
11. Վերահսկել դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը, ուսումնական ծրագրերի կատարումը, դասավանդման որակը, կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը։
12. Ուսումնական պլանին համապատասխան ապահովել կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը։
13. Իրականացնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը։
14. Իրականացնել ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ։
15. Կազմել ուսումնական պարապմունքների դասացուցակ։

16. Ղեկավարել դպրոցի մանկավարժական խորհուրդը, աջակցել դպրոցի Կանոնակարգով նախատեսված այլ խորհրդակցական մարմիններին։
17. Ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները։
18. Վերահսկել դասղեկների գործունեությունը։
19. Վերահսկել սովորողների ուսումնական պարապմունքները։
20. Վերահսկել դասավանդման բովանդակությունը, սովորողների գիտելիքների յուրացման որակը, նրանց վարքը, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը, դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարումը։
21. Սահմանված կարգով ձևավորել հաստատության սովորողների համակազմը, ապահովել նրանց սոցիալական պաշտպանվածությունը։
22. Նոր ընդունվող Սովորողին և Օրինական ներկայացուցչին ծանոթացնել Դպրոցի Կանոնակարգին, ներքին կարգապահական կանոններին, ուսումնառության գործընթացի պայմաններին, ինչպես նաև ապահովել ՀՀ օրենսդրությամբ նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների ճշգրիտ ու ժամանակին կատարման համար անհրաժեշտ երաշխիքներ։
23. Օժանդակել Սովորողին՝ իրացնելու օրենքով ամրագրված կրթական իրավունքը ՀՀ օրենսդրությամբ, Կանոնակարգով սահմանված կարգով, միաժամանակ ապահովել առարկայական չափորոշիչներով պահանջվող գիտելիքների, կարողությունների ընդհանրական որակական մակարդակը։
24. Սովորողին ապահովել ուսումնառության համար պատշաճ պայմաններով (առարկայական լսարան, լաբորատորիա-փորձասենյակ, դասասենյակ, մարզադահլիճ, սանիտարահիգիենիկ հանգույց և այլն)՝ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ գույք, տեղեկատվություն, ուսումնական գրականություն, ուսուցողական դիդակտիկ ցուցադրական առարկաներ, ինչպես նաև անվտանգության տեխնիկայի և առողջության պահպանության կանոններին համապատասխան նյութատեխնիկական միջոցներ, սարքավորումներ և պարագաներ։
25. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ Սովորողի առողջության, հիգիենայի, սննդի, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար։
26. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ Սովորողի և Ուսուցչի փոխհամագործակցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև ուսուցման ընթացքում առաջավոր մեթոդների ներդրման համար։

27. Դպրոցում ձևավորել բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ՝ Սովորողին և Օրինական ներկայացուցչին մասնակից դարձնելով ուսումնական, դաստիարակչական աշխատանքների գործառույթներին։
28. Հարգանքով վերաբերվել Սովորողի իրավունքներին ու ազատություններին, ուսումնառության ընթացքում միաժամանակ կիրառել ժողովրդավարական սկզբունքներ։
29. Իրավաչափ գործողություններ կիրառել Սովորողի կյանքի և շահերի դեմ ուղղված ոտնձգություններից պաշտպանելու համար, միաժամանակ իրագործել նրան քրեածին բնույթի հանցավոր արարքներից հետ պահող, կանխարգելող միջոցներ։
30. Օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն տարին առնվազն մեկ անգամ կազմակերպել Սովորողի առողջության պահպանման բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կազմակերպել առաջին բուժօգնություն։
31. Ապահովել ուսումնանյութական բազայի հաշվառումը, համալրումը, սանիտարահիգիենիկ վիճակի, աշխատանքի անվտանգության պահպանումը։
32. Վերահսկել դպրոցի շենքի և գույքի պահպանումը, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովումը
33. Հարստացնել դպրոցի ուսումնամեթոդական բազան:

3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

1. Մանկավարժական խորհրդի նիստերի պլանավորում 2021-2022 ուստարում մանկավարժական խորհրդի նիստերում քննարկել հետևյալ հարցերը. Առաջին նիստի օրակարգում 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 2. 2021-2022 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմի հաստատում և մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն (զեկուցող՝ տնօրեն) 3. Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվության քննարկում (զեկուցող՝ տնօրեն) 4. Դպրոցում 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 5. 2021-2022 ուսումնական տարվա դասաբաշխման և դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին (զեկուցող՝ տնօրեն) 6. Դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 7. Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 8. Ուսումնառության ներքին կարգապահական կանոնների մասին (զեկուցող՝ տնօրեն) 9. Դպրոցում 2021-2022 ուսումնական տարվա պետական չափորոշչին համապատասխան ուսումնական հիմնական ծրագրերի իրագործման խնդիրների, ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, նոր դասագրքերի, մեթոդական գրականության կիրառման մասին (զեկուցող՝ տնօրեն) 10. Դպրոցի սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատման մասին (զեկուցող՝ տնօրեն) 11. Մեթոդական միավորումների ձևավորման մասին (զեկուցող՝ տնօրեն)	օգոստոս

12. Դպրոցի 2-9-րդ դասարանները սովորողներով համալրելու մասին: Դասարանների կազմավորման հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրեն) 13. 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի ներկայացում և հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 14. Տնօրենի տեղակալի, մեթոդական միավորումների, դասղեկների աշխատանքային պլանների հաստատում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ, դասղեկներ) 15. Վերաքննությունների մասին (զեկուցող՝ տնօրեն) 16. Դասագրքերի բաշխման մասին (զեկուցող՝ գրադարանավար)	
<u>Երկրորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության հարցեր (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ) 3. Օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 4. Էլեկտրոնային մատյանում գրանցումների, գնահատումների, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 5. Ընթացիկ հարցեր	հոկտեմբեր
<u>Երրորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ դասղեկներ) 3. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում: Ուսումնադաստիարակչական	դեկտեմբեր

աշխատանքների 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 4. Տնօրենի տեղակալի, մեթոդական միավորումների, դասղեկների աշխատանքների արդյունավետության քննարկում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 5. Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստում: Տարածքային փուլ անցած աշակերտների անվանացանկի հաստատում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 6. Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության հարցեր (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ) 7. Դպրոցից սովորողների տեղափոխման և ընդգրկման (աշակերտների շարժի) հարցի ներկայացում (զեկուցող՝ տնօրեն) 8. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պլանի և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն)	
<u>Չորրորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. Սովորողների՝ առարկայական օլիմպիադաներում ցուցաբերած արդյունքների ներկայացում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 3. 2021-2022 ուստարվա 9-րդ դասարանի շրջանավարտների ավարտական և կենտրոնացված ավարտական քննությունների նախապատրաստման հետ կապված հարցեր, սովորողների կողմից ընտրված ավարտական քննական առարկաների ցանկի ներկայացում (զեկուցող՝ տնօրեն) 4. Մեթոդական միավորումների հաշվետվություններ (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)	փետրվար
<u>Հինգերորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)	ապրիլ

2. Էլեկտրոնային մատյաններում գրանցումների, գնահատումների, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 3. Տնօրինության կողմից ապրիլին տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում (զեկուցող՝ տնօրեն) 4. Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության հարցեր (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)	
<u>Վեցերորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. Ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման հարցը (զեկուցող՝տնօրեն)	մայիս
<u>Յոթերորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. 2021-2022 ուսումնական տարվա փոխադրական դասարաններում ուսման առաջադիմության ամփոփման, սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, 4-րդ դասարանների սովորողներին գիտելիքների ստուգումներին, 9-րդ դասարանի սովորողներին ավարտական քննություններին թույլատրելու, ՀՀ ԿԳՄՄՆ-ի գովասանագրերով և դպրոցի շնորհակալագրերով պարգևատրելու մասին (զեկուցող՝ դասղեկներ և տնօրենի տեղակալ) 3. Վերաքննությունների մասին, ամառային առաջադրանքների հաստատում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 4. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների 2-րդ կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրենի տեղակալ)	հունիս

5. 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգումների և 9-րդ դասարանում ավարտական քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացում, քննական հանձնաժողովների կազմի հաստատում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) <u>Ութերորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. Դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգումների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ)	հունիս
<u>Իններորդ նիստի օրակարգում</u> 1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. Դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա 9-րդ դասարանում ավարտական քննությունների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) 3. Դպրոցում գործող արտադասարանական խմբակների և կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (հոգեբանական, առողջապահական) ծառայությունների գործունեության հաշվետվություն (զեկուցող՝ խմբակավարներ, հոգեբան, լոգոպեդ, բժիշկ) 4. Դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի արդյունքների քննարկում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ) Ծանոթություն: Անհրաժեշտության դեպքում ուստարվա ընթացքում հրավիրել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստեր, որոնց ընթացքում քննարկել հրատապ լուծում պահանջող խնդիրները:	հուլիս

2. Մեթոդական միավորումների հիմնական խնդիրները 1.Ուսուցիչների առարկայական և մեթոդամանկավարժական պատրաստականության բարձրացման, ըստ օղակների աշխատանքները համակարգելու և վերահսկելու նպատակով ստեղծել հետևյալ մեթոդական միավորումները. • Տարրական կրթության. նախագահ՝ դասվար Վարդուհի Ծատուրյան, • Հայերենի. նախագահ՝ Մայրենիի ուսուցչուհի Գրետա Գասպարյան, • Ռուսաց լեզվի. նախագահ՝ Ռուսաց լեզվի ուսուցչուհի Աննա Պետրոսյան, • Անգլերենի. նախագահ՝ Անգլերենի ուսուցչուհի Շաքե Դանիելյան, • Մաթեմատիկայի. նախագահ՝ Մաթեմատիկայի ուսուցչուհի Նարինե Գրիգորյան, • Պատմաշխարհագրական. նախագահ՝ Պատմության ուսուցչուհի Հասմիկ Մանուչարյան, • Բնագիտական. նախագահ՝ Քիմիայի ուսուցչուհի Նելլի Մարտիրոսյան, • Արվեստի, արհեստի և սպորտի. նախագահ՝ Ֆիզկուլտուրայի ուսուցչուհի Էլվիրա Սարգսյան:	օգոստոս տնօրեն
2 Ամսական մեկ անգամ ըստ սահմանված գրաֆիկի անցկացնել մեթոդական միավորումների նիստեր և քննարկել. • մեթոդամանկավարժական խնդիրները, • որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության արդյունքները, • առաջավոր մանկավարժների փորձը, • ուսուցողական դասերը, • սովորողների առաջադիմությանն առնչվող հարցերը, • դաստիարակության և սոցիալականացման խնդիրները, • տետրերի փոխադարձ ստուգումների արդյունքները, • միջոցառումները՝ ի նպաստ և վասն սովորողների գիտելիքների բարելավման, դաստիարակության, ճաշակի ձևավորման, հոգևոր զարգացման, առողջության պահպանման:	մեթոդական միավորումների նախագահներ

3.Դպրոցի տնօրինության և մեթոդական միավորումների կողմից ուստարվա ընթացքում իրականացնել առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրություններ և արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստերում:	մեթոդական միավորումների անդամներ
4.Ուսումնասիրել խմբակների պարապմունքների դրվածքը և արդյունքները ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստում:	մեթոդական միավորումների նախագահներ, անդամներ
5.Կազմակերպել համադպրոցական առարկայական օլիմպիադաներ:	
1. <u>Արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների կազմակերպում</u>	
1. Ստեղծել գեղագիտական և սպորտային արտադասարանական խմբակներ, նշանակել խմբակների ղեկավարներ, կազմել աշխատանքային պլաններ, պարապմունքների օրացուցային պլան և հետևել խմբակների նորմալ աշխատանքին:	սեպտեմբեր տարվա ընթացքում
2. Տարրական դասարանների սովորողներին, ըստ նախասիրությունների, ընդգրկել արտադասարանական խմբակներում:	սեպտեմբեր
3. Արտադասարանական խմբակների պարապմունքներին մասնակցող սովորողների ուժերով կազմակերպել թեմատիկ ցերեկույթներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, ձևավորել կաբինետներ:	տարվա ընթացքում
2. Դպրոցում սահմանել ուսուցչական ամենօրյա հերթապահություն, կազմել հերթապահության գրաֆիկ և հետևել, որ հերթապահները բարձր պատասխանատվությամբ կատարեն իրենց պարտականությունները:	սեպտեմբեր տարվա ընթացքում
4 <u>Ֆիզիկական դաստիարակություն</u>	
1. Կազմակերպել շախմատի մրցումներ՝ 2-4-րդ, 5-9-րդ և սպորտային խաղեր՝ 1, 7-9-րդ դասարանների սովորողների միջև:	տարվա ընթացքում
2. Ուսումնասիրել և մեթոդական միավորման նիստում քննարկել ֆիզդաստիարակության դրվածքը 1-4-րդ, 5-9-րդ դասարաններում:	ապրիլ
3. Հարստացնել դպրոցի մարզական բազան, գծել վազքուղիները:	սեպտեմբեր

4. Ֆիզկուլտուրան և սպորտը մասսայականացնելու նպատակով պատրաստել հետևյալ ցուցատախտակը՝ «Ուժ, գեղեցկություն, ճարպկություն» խորագրով:	ապրիլ
5 <u>Հայրենասիրական դաստիարակություն</u>	
1. Մայրենիի, Հայոց լեզվի, Գրականության, Հայրենագիտության, Հայոց պատմության դասաժամերին մեծ ուշադրություն դարձնել հայրենասիրական թեմաների դասավանդմանը, ուսուցչի մեթոդական պատրաստվածությանը, դասի զգացմունքային կողմերին և երեխաների հուզաշխարհի վրա ուսուցչի նրբորեն ներազդելու կարողությանը (դասալսումների միջոցով):	տարվա ընթացքում
2. Կազմակերպել դաս-էքսկուրսիաներ թանգարաններ, մշակույթի կենտրոններ:	տարվա ընթացքում
3. Կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ:	տարվա ընթացքում
4. Մեծ ուշադրություն դարձնել ուսուցիչների՝ հայրենասիրական դաստիարակության նկատմամբ ունեցած հայացքներին, խոսքին, վերաբերմունքին:	տարվա ընթացքում
5. Կազմակերպել հանդիպումներ անվանի այնպիսի հայորդիների հետ, որոնց խոսքն ու գործը կնպաստեն երեխաների հայրենասիրական դաստիարակությանը:	տարվա ընթացքում
6. <u>Գեղագիտական դաստիարակություն</u>	
Սովորողների գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացման և հոգևոր առաջընթացի նպատակով. ա) ստեղծել գեղագիտական խորհուրդ հետևյալ կազմով՝ Հարությունյան Քրիստինե Պետրոսյան Անի Հովեյան Անարա	սեպտեմբեր
բ) բացել նկարչական և ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ, գ) ձևավորել անկյուն «Ստեղծագործում են երեխաները» խորագրով,	տարվա ընթացքում
դ) կազմակերպել դասալսումներ Կերպարվեստի, Երաժշտության, Տեխնոլոգիայի դասաժամերին՝ ուսումնասիրելով ուսուցիչների դասավանդման մեթոդները՝ սովորողների գեղագիտական դաստիարակության արդյունավետության առումով: Արդյունքները	հոկտեմբեր-մարտ հոկտեմբեր-դեկտեմբեր

քննարկել մեթոդական միավորման նիստում: ե) կազմակերպել դաս-հանդիպումներ «Դասը վարում է արվեստագետը» խորագրով:	տարվա ընթացքում
7. <u>Աշխատանք դասարանների ղեկավարների հետ</u>	
1. Պահանջել բոլոր դասղեկներից կազմել դասղեկական աշխատանքային տարեկան ծրագրերը և սահմանված ժամկետում ներկայացնել հաստատման:	սեպտեմբեր
2. Վերահսկել, որ դասղեկները պատասխանատվություն կրեն հետևյալ հարցերի համար. • ուսումնադաստիարակչական աշխատանք, • մատենավարություն, • կարգապահություն, • դասագրքերի խնամք:	տարվա ընթացքում
3. Նախապես կազմված և հաստատված պլանի համաձայն երկու ամիսը մեկ անգամ հրավիրել դասղեկների խորհրդակցություն, ուր լսել մեթոդական զեկուցումներ, հաշվետվություններ, առանձին դասարանների ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկումներ դասղեկի ժամի և դասարանական ու ծնողական ժողովների անցկացման կարգի ու այլ հարցերի մասին:	տարվա ընթացքում
4. Օգնել դասղեկներին սովորողի՝ մանկավարժորեն հիմնավորված օրվա ռեժիմ կազմելու և այն ծնողներին հասցնելու գործում:	տարվա ընթացքում
5. Տևական ջանքեր գործադրել դասարանական առողջ, համերաշխ, գործունյա կոլեկտիվ ստեղծելու և այն նպատակամղելու բազմակողմանիորեն զարգացած, նվիրյալ հայրենիներ դաստիարակելու գործին:	տարվա ընթացքում
6. Պահանջել դասղեկներից ամենօրյա հսկողություն սահմանել սովորողների հաճախումներին և կարգապահությանը:	տարվա ընթացքում

4. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացումը

1. Ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:
2. Ստեղծել պայմաններ աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման համար:
3. Խրախուսել և խթանել աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը:

Digitally signed by PETROSYAN OFELYA 6003690208